

Ղեկավարության Հայտարարությունը

«Ֆինանսական տեխնոլոգիաների լաբորատորիա» ՓԲԸ միջանկյալ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ

«Ֆինանսական տեխնոլոգիաների լաբորատորիա» ՓԲԸ (այսուհետ՝ Ընկերություն) ղեկավարությունը սույն հայտարարությամբ հաստատում է իր պատասխանատվությունը Ընկերության ֆինանսական վիճակի արժանահավատորեն արտացոլող ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար:

Ընկերությունը 2015թ. ապրիլի 1-ից հունիսի 30-ը հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունները կազմել է Միջազգային ֆինանսական հաշվետվությունների ստանդարտներին համապատասխան: Ընկերությունում հաշվապահական հաշվառումն իրականացվել է «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքին, Միջազգային հաշվապահական հաշվառման ստանդարտներին, գերատեսչական նորմատիվ այլ իրավական ակտերին և Ընկերության կողմից հաստատված հաշվապահական հաշվառման քաղաքականության համապատասխան:

Ընկերության ակտիվները, պարտավորությունները, սեփական կապիտալը, հաշվեկշռային հաշիվներում հաշվառելու նպատակով Ընկերության ղեկավարությունն ընտրում և կիրառում է այնպիսի հաշվապահական հաշվառման քաղաքականություն, որ ֆինանսական հաշվետվությունների փաթեթը և դրանցում պարունակվող տեղեկատվությունը պարտադիր բավարարեն կիրառվող յուրաքանչյուր ստանդարտի բոլոր պահանջներին և հաշվապահական հաշվառումը կարգավորող այլ ակտերին:

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է՝

- հաշվապահական հաշվառման քաղաքականության ընտրության, բաժնետերերի կողմից հաստատման և դրա հետևողականորեն կիրառման համար.
- միջազգային հաշվապահական հաշվառման ստանդարտների պահանջների պահպանման, իսկ դրանց շեղումների դեպքում՝ ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում այդ շեղումների բացահայտման համար.
- հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերի պահանջներին համապատասխան հաշվապահական հաշվառում կազմակերպելու համար.
- հաշվապահական հաշվառման վարման ապահովման, ֆինանսական հաշվետվությունների կազմման ու ներկայացման համար.
- ֆինանսական հաշվետվությունները Ընկերության գործունեության անընդհատության հիման վրա պատրաստելու համար, եթե առկա չէ Ընկերությունը լուծարելու կամ գործունեությունը դադարեցնելու հավանականությունը.

- Ընկերության ֆինանսական վիճակի վերաբերյալ ժամանակին և բավարար ճշտությամբ տեղեկատվության ապահովման, ՀՀ օրենսդրությանը և միջազգային հաշվապահական հաշվառման ստանդարտների համապատասխանող հաշվապահական հաշվառման համակարգի ներդրման համար.
- Ընկերության ակտիվների պահպանության, խարդախության և անճշտությունների բացահայտման ու կանխմանն ուղղությամբ՝ իրավասությունների սահմաններում, միջոցներ ձեռնարկելու համար:

«Ֆինանսական տեխնոլոգիաների լաբորատորիա» ՓԲԸ

Տնօրեն

Արտակ Նահապետյան

Գլխավոր հաշվապահ

Գայանե Ղուկասյան